Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 02-06-2022 թ. որոշմամբ
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17
1.3 Պետական գրանցման համարը		222.160.906715
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-12-23
1.5 ՀՎՀՀ-ն		02527624
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10597025
		+(374)91373194
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.aspu.am
1.8 Էլեկտրոնային փոստը		a.karapetyan1170@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Սրբուհի Գևորգյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1107	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	50,000	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսանող. նպաստ	544,221,900
	Գիտության հավելավճար, ենթակառուցվածքների պահպանում	65,538,800
	Բարձրագույն կրթության կրթաթոշակ	37,272,000

	Թեմատիկ ֆինանսավորում,թեկնածուական պաշտպանությունների կազմակերպում	17,731,000
	Հետբուհական կրթության նպաստ	6,572,500
	Հետբուհական կրթության կրթաթոշակ	5,040,000
	Հիմնական ընդհանուր կրթություն	183,088,800
	Ուսուցիչների հավելավճար	1,855,900
	Շախմատ ինստիտուտի հետ համագործակցություն	2,880,000
	ՀՀ ԿԳՄՄՆ 44 օրյա պատերազմի մասնակիցներին աջակցություն	23,584,172
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ARMDCT/դրամաշնորհային ծրագիր	12,482,000
	ԿԲ/Ֆինանսական կրթությունը դպրոցում/ուսուցիչների վերապատրաստում	52,233,074
	ուման վարձի մասնակի փոխհատուցում	71,798,800
	ՀՀ դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	2,354,801
	Շախմատի ֆեդերացիա	622,774
	Բարձրագույն և հետբուհական կրթական ծառայություն,Աղավնաձորի ուսումնական բազայի կողմից հանգստի կազմակերպման ծառայություն այլ ծառայությունների	11,613,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ուսման վարձի մասնակի փոխհատուցում	2,092,937,479
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
/APPEAR /Լեռնային երկրների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում	1,678,644	
/BOOST/Հայաստանի համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանում	13,726,580	

MODEST Գիտության ոլորտում հետբուհական արդիականացումը և դասավանդման մեթոդաբանությունան բարելավումը	2,243,992
ARMDOCT/Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան/	4,760,983
Շախմատ ինստիտուտի հետ համագործակցություն	733,124
Ուսանողական կրթաթոշակի տրամադրում	42,731,000
Ֆինանսական կրթությունը դպրոցում	52,233,074
ՀՀ դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	2,354,801
Ուսումնական պրոցեսի կազմակերպում	2,941,481,802
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	3,061,944,000
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,984,212,000

Նշումներ՝

Կանոնադրական նպատակներով իրականացմանն ուղղված ծախսերի և Ֆինանսական տարում օգտագործված միջոցների տարբերությունը վերաբերվում է աշխատակիցների բուժ ապահովագրության, աուդիտորական ծառայություններին և դրամաշնորհային և այլ ծրագրերի կատարմանը

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___5___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

AMH AUDIT HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0023,
Արշակունյաց պող. 2,
գրասենյակ 315

Հեռախոս՝ +(374 60) 62 32 51
Կայքեր՝ www.amhaudit.am
www.hlb.global

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան" հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք իրականացրել ենք "Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան" հիմնադրամի (այսուհետ՝ "Կազմակերպություն") և նրա դուստր կազմակերպության՝ "Դպրոց" ՍՊԸ-ի (այսուհետ միասին՝ "Խումբ") համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ այն ճշգրտումների ազդեցության, որոնք կարող էին առաջանալ, եթե մեզ հաջողվեր ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ *"Վերապահումով կարծիքի հիմքեր"* բաժնի առաջին և երրորդ պարագրաֆներում նկարագրվածների վերաբերյալ և երկրորդ պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության վերաբերյալ, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս համախմբված գործունեության արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմքեր

Կազմակերպության հիմնական միջոցների սկզբնական արժեքների ընտրանքային ստուգման ժամանակ պարզվեց, որ առ 31 դեկտեմբերի 2021թ. հիմնական միջոցների ռեգիստրից 28 հիմնական միջոցների՝ 5,289,773 հազար դրամ սկզբնական արժեքով, այդ թվում շենքեր դասից 9 հիմնական միջոցների՝ 5,082,477 հազար դրամ սկզբնական արժեքով (2020թ.՝ 29 հիմնական միջոցներ՝ 4,576,778 հազար դրամ սկզբնական արժեքով, այդ թվում շենքեր դասից 9 հիմնական միջոցների՝ 4,348,147 հազար դրամ սկզբնական արժեքով), սկզբնական փաստաթղթերը չեն պահպանվել, որի արդյունքում հնարավոր չէր ստուգել հիմնական միջոցների սկզբնական արժեքների արժանահավատությունը: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել նշված հիմնական միջոցների սկզբնական արժեքների վերաբերյալ: Համապատասխանաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության 1,657,331 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների և այդ ամսաթվին ավարտված տարվա մաշվածության ծախսի, տարվա վնասի և կուտակված արդյունքի համար:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 12(բ)-ում, 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Կազմակերպությունը չի իրականացրել 1,686,090 հազար դրամ սկզբնական արժեքով (2020թ.՝ 1,596,622 հազար դրամ) և զրո հաշվեկշռային արժեքով հաշվառվող հիմնական միջոցների գործառնական արդյունավետության վերանայումը, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 16 *"Հիմնական միջոցներ"* ստանդարտով, և անփոփոխ է թողել հիմնական միջոցների բոլոր տեսակների օգտակար ծառայության ժամկետները: Նշված անհամապատասխանության ազդեցությունը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի, մաշվածության ծախսի, տարվա վնասի և կուտակված արդյունքի վրա չի որոշել:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 12(ա)-ում, Կազմակերպությունն իր գործունեության տասնամյակների ընթացքում ձեռավորել է ավելի քան 570,000 գրքերով գրադարան: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրադարանի գրքերը հաշվառվում են մեկ տողով՝ 55,861 հազար դրամ սկզբնական արժեքով և զրո

հաշվեկշռային արժեքով: Կազմակերպության հաշվապահական գրանցումներում գրքերի վերաբերյալ քանակագումարային վերլուծական տվյալների չպահպանվելու պատճառով Կազմակերպությունը գրքերի գույքագրում չի կարողանում իրականացնել: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հիմնական միջոցների ֆիզիկապես առկա քանակության վերաբերյալ: Համապատասխանաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի և այդ ամսաթվին ավարտված տարվա մաշվածության ծախսի, տարվա վնասի և հաստատված արդյունքի համար:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *"Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների Խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀՎՄՍԽ Վարքագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2021թ. ապրիլի 15-ի եզրակացությունում արտահայտվել է ձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Խումբը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են վերահսկել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում՝ ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական՝ եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած էական հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Արամ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն
"Էյ-Էմ-Էյչ Աուդիտ" ՓԲԸ
13 ապրիլի 2022թ.

Լիլիթ Հովհաննիսյան
Պատասխանատու աուդիտոր

հազ. դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	1,657,331	1,388,586
Ոչ նյութական ակտիվներ		57,814	57,814
Այլ ներդրումներ	13	7,560	16,800
Հետաձգված հարկային ակտիվներ	11	-	12,887
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,722,705**	**1,476,087**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		31,302	49,324
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	377,150	319,120
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	622,240	552,641
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,030,692**	**921,085**
Ընդամենը ակտիվներ		**2,753,397**	**2,397,172**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	18,393	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	16	567,998	150,600
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**586,391**	**150,600**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	17	16,965	15,705
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	18	296,117	216,373
Չվաստակած եկամուտ	19	359,717	310,927
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**672,799**	**543,005**
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		1,494,207	1,703,567
Ընդամենը զուտ ակտիվներ		**1,494,207**	**1,703,567**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**2,753,397**	**2,397,172**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022 թվականի ապրիլի 13-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սրբուհի Գևորգյան
Ռեկտոր

Սուսաննա Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 34-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Հասույթ	5	3,003,077	3,020,585
Ինքնարժեք	6	(2,591,980)	(2,747,008)
Համախառն շահույթ		**411,097**	**273,577**
Այլ եկամուտ	7	156,411	252,815
Վարչական ծախսեր	8	(549,148)	(396,467)
Իրացման ծախսեր		(20,581)	(16,889)
Այլ ծախսեր	9	(106,455)	(213,268)
Գործառնական գործունեության արդյունքներ		**(108,676)**	**(100,232)**
Ֆինանսական եկամուտ	10	11,811	33,751
Ֆինանսական ծախսեր	10	(24,830)	-
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ		(24,468)	(32,946)
Վնասը մինչև շահութահարկով հարկումը		**(146,163)**	**(99,427)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	11	(53,957)	27,864
Վնաս տարվա համար		**(200,120)**	**(71,563)**
Այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքով չափվող ներդրումների վերագնահատումից նվազում	13	(9,240)	(5,950)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ		**(9,240)**	**(5,950)**
Ընդամենը համապարփակ եկամուտ		**(209,360)**	**(77,513)**

Digitally signed by KARAPETYAN ANAHIT
7711700180
Date: 2022.08.29 17:00:58 AMT

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 34-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.08.2022 16:57